ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ «ՅՈԹ ՎԵՐՔ» ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Արդեն հաստատված ավանդությամբ ժամանակ առ ժամանակ Մայր Աթոռ Ս. Էջմիածին են հրավիրվում Հայաստանում գործող այլ եկեղեցիների երգչախմբերը՝ իրենց մասնակցությունը բերելու ս. պատարագին միածնաէջ ս. տաճարում և վերանորոգելու իրենց ուխտը՝ հանդեպ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու:

Նոյեմբերի 18-ին, կիրակի օրը, հայրապետական հրավերովը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի, Մայր Աթոռիս հյուրն էին Լենինականի «Յոթ վիրաց» Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու երգչախմբի անդամները, գլխավորությամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանի:

Լենինականի «Յոթ վերք» եկեղեցու քառաձայն երգչախումբը կազմվել է 1956 թ.: Ներկայումս երգչախմբի ղեկավարն է ջնորհալի երաժիշտ Արամ Աղաբաբյանը: Երգչախումբը բաղկացած է 20 երկսեռ անդամներից:

Ուրախությամբ պետք է արձանագրել, որ Շիրակի «Յոթ վերք» եկեղեցու երգչախումբը, ինչպես երևաց ս. պատարագի երգեցողությունից, ունի կատարողական բարձր մակարդակ:

Օրվա պատարագիչն էր Շիրակի թեմի առաջնորդը: Սրբազան հայրը «Հայր մեր»-ից առաջ խոսում է բովանդակալից մի քարոզ՝ վեր հանելով հոգևոր երգի դերն ու նշանակությունը եկեղեցիներում հոգևոր մթնոլորտ ստեղծելու համար, որովհետև հոգևոր երգն էլ աղոթք է, հոգևոր թռիչք՝ դեպի աստվածային բարձունքները: «Ինքնին մեծ է ուժը աղոթքի, բայց էլ ավելի մեծ է ու բարձր, երբ այն ուղեկցվում է խոնարհ և հոգեթով երգով, երգ, որ կարող է հասնել մինչև բարձունքները անհունի, մինչև գահն Աստուծո»:

Սրբազան հայրը իր քարոզի վերջում հատկապես նշում է.

«Այսօր, մեզ համար հիշարժան այս պահին, եկել ենք Ս. Էջմիածին առ ոտն մերօրյա մեծ Հայրապետի՝ ներկայացնելու համար ոչ միայն մեր քննությունը, այլև աղոթելու և ամենքիդ հետ երգով ասելու. «Տեր, «երկար կեանք տուր Հայրապետին և ...անսասան պահիր դու միշտ, քո իսկ հիմնած Մայր Աթոռ», աղոթելու Հայ Առաքելական Եկեղեցու անսասանության համար, և մանավանդ, այս խնկաբույր կամարների տակ մեկ անգամ ևս փառաբանելու մեր երկնավոր Հորը՝ խնդրելով նրա օրհնությունը մեր բոլորին և կատարյալ խաղաղություն համայն աշխարհին»:



Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու երգչախումբը առաջնորդ սրբազանի հետ

Ս. պատարագից հետո Վեհարանում երգչախմբի անդամներին ընդունում է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն և տալիս իր հայրապետական գնահատանքն ու օրհնությունը: Այս առթիվ երիտասարդ երգիչ-երգչուհիները ծանոթանում են Նոր Վեհարանի թանգարանային ցուցանմուշներին, այցելում «Ալեք և Մարի Մանուկեան» նորակառույց գանձատուն, Մայր տաճարին կից թանգարան և մեծագույն տպավորություններով վերադառնում հայրենի Շիրակ: